

Ֆինանսական համակարգի հաշտարար

Ապահովագրական իրավունքի դատախազ-մրցույթ

Պաշտոնական կանոններ

2019

Երևան 2019

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից կազմակերպվող դատախազ-մրցույթը ապահովագրական իրավունքի մրցույթ է, որի մասնակիցներն են բարձրագույն ուսումնական հաստատությունները ներկայացնող ուսանողների թիմերը:
2. Մրցույթի նպատակն է նպաստել ուսանողների կողմից ապահովագրական իրավունքի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և տվյալ ոլորտի ավելի խորը ուսումնասիրմանը:
3. Դատախազը կրթական միջոցառում է, որն իրականացվում է բանավոր և գրավոր փուլերով և առավելագույնս նմանեցված է իրականին:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Մրցույթի կազմակերպիչն է Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը:
5. Մրցույթը բաղկացած է երկու փուլերից.
Առաջին - գրավոր փուլ, որը ներառում է Հաճախորդի պահանջ-դիմումի և Կազմակերպության պատասխանի (գրավոր առարկություններ) պատրաստում և ներկայացում
Երկրորդ փուլ - բանավոր լսումներ
6. Բանավոր լսումների անցկացման վայրն է՝ ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորիչ փող., 4/2 շենք, «ԴԱԲԼԹԻ ԲԱՅ ՀԻԼԹՆ ԵՐԵՎԱՆ» հյուրանոց:
7. Մրցույթին վերաբերվող բոլոր փաստաթղթերը հրապարակված են Ֆինանսական համակարգի հաշտարարի պաշտոնական կայքէջի «Հայտարարություններ» բաժնում՝ <http://fsm.am/Announcement-hy> հասցեով
8. Մրցույթի անցկացման լեզուն հայերենն է:
9. Մրցույթին մասնակցությունն անվճար է:

10. Բանավոր լսումներն անցկացվում են երկու փուլով.
- նախնական փուլ, որի արդյունքների հիման վրա ընտրվում են կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլի մասնակիցները,
 - կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլ, որոնց արդյունքում ընտրվում է մրցույթի հաղթողը:
11. Դատախաղի առաջին՝ գրավոր փուլն անցկացվելու է 25.03.2019թ-ից 22.04.2019թ-ը:
Բանավոր լսումների նախնական փուլն անցկացվելու է 27.04.2019թ.-ին:
Կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերն անցկացվելու են 28.04.2019թ.-ին:

III. ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

12. Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել լրացված գրանցման հայտը, որը տեղադրված է Ֆինանսական համակարգի հաշտարարի պաշտոնական կայքէջի «Հայտարարություններ» բաժնում:
13. Գրանցման հայտը պետք է լրացվի և ուղարկվի mootcourt2019@fsm.am էլ. հասցեին ոչ ուշ, քան 25.03.2019թ.-ը:
14. Մրցույթի խնդիրը հրապարակվելու է 2019թ.-ի մարտի 14-ին Ֆինանսական համակարգի հաշտարարի պաշտոնական կայքէջի «Հայտարարություններ» բաժնում՝ <http://fsm.am/Announcement-hy> հասցեով

Մինչև 04.04.2019թ.-ը mootcourt2019@fsm.am էլ. հասցեին մասնակիցների կողմից կարող են ուղարկվել գործի փաստերը ճշգրտելու վերաբերյալ հարցեր: Մինչև 09.04.2019թ. կայքում տեղադրված կլինեն հարցերի պատասխանները:

Յուրաքանչյուր թիմ ներկայացնելու է պահանջ-դիմում՝ Հաճախորդի անունից և դրան պատասխան՝ Կազմակերպության անունից: Թիմերի պահանջ-դիմումները և դրանց վերաբերյալ պատասխանները պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 22.04.2019թ.-ի ժամը 23:59, որից ուշ ներկայացնելու դեպքում հաշվարկվում են տուգանքներ՝ միավորների նվազեցման տեսքով:

Մրցույթի կազմակերպչի կողմից յուրաքանչյուր թիմին տրվում է նույնականացման համար, որի նպատակն է թիմերի անաչառ և արդար գնահատումը:

Թիմի անդամներին խստիվ արգելվում է երրորդ անձանց հայտնել այն մասին թե, որ համալսարանն են վերջիններս ներկայացնում:

Բոլոր մասնակից թիմերի կողմից պահանջ-դիմումները և դրանց պատասխանները ստանալուց հետո Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում անցկացվում է վիճակահանություն, որի արդյունքում որոշվում են նախնական փուլի լսումների հակառակորդ թիմերը: Վիճակահանության օրվա, ժամի և վայրի վերաբերյալ յուրաքանչյուր թիմի ավագ տեղեկացվում է նախօրոք՝ էլ. նամակով:

15. Յուրաքանչյուր բուհ իրավունք ունի առաջադրելու մրցույթի մասնակից մեկ և ավելի թիմեր: Թիմի կազմում կարող են ընդգրկվել համապատասխան բուհի բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի 2-4 ուսանող: Պահանջ դիմումները և պատասխանները ներկայացնելուց հետո թիմերի կազմերը փոփոխման ենթակա չեն:

15.1 Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մարզիչ, ով պետք է լինի տվյալ բուհի դասախոս և չպետք է հանդես գա որպես մրցույթի հաշտարար: Մարզիչը իրավասու է միայն ուղղորդել թիմերին մրցույթի փուլերին պատրաստվելու ընթացքում, սակայն իրավունք չունի ցուցաբերել որևէ անմիջական մասնակցություն:

16. Նախնական փուլում յուրաքանչյուր թիմ մասնակցում է երկու լսումների, որոնցից մեկում՝ ներկայացնում է հաճախորդի շահերը, մյուսում՝ կազմակերպության:

17. Կողմերի պահանջ-դիմումների և պատասխանների ներկայացվող հիմնական պահանջներն են.

17.1. Տեքստի բովանդակային մասը չպետք է գերազանցի 20 էջը Sylfaen 12 տառաչափով, միջտողային տարածությունը՝ 1.5, ձախ լուսանցքը՝ 3 սմ, աջը՝ 1,5 սմ, վերևինը և ներքևինը՝ 2-ական սմ: Պահանջ-դիմումները և պատասխանները ներկայացվում են pdf և MicrosoftWord ֆորմատով և չպետք է պարունակեն որևէ նշում այն մասին, թե, որ համալսարանն է ներկայացնում տվյալ թիմը, փոխարենը՝ պետք է նշվի թիմի նույնականացման համարը:

Պահանջ դիմումը և պատասխանը պետք է ունենան հետևյալ բաժինները՝

1) պարզաբանման և լուծման ենթակա հարցեր,

- 2) գործի համար էական նշանակություն ունեցող փաստեր (1-1,5 էջի սահմաններում),
- 3) պահանջների փաստական և իրավական հիմնավորումներ, և այս կամ այն պահանջը չընդունելու վերաբերյալ առարկություններ ու դրանց հիմնավորումներ,
- 4) եզրակացություն
- 5) Հաշտարարին ուղղված պահանջը (պահանջ-դիմումի դեպքում):

17.2. Պահանջ-դիմումը և գրավոր առարկությունները պետք է հղումներ ունենան միայն այնպիսի ապացույցների և փաստական հանգամանքների վրա, որոնք արդեն առկա են գործում:

17.3 Պահանջ-դիմումները և պատասխանները պետք է ներառեն իրավական նորմերի և այլ աղբյուրների հղումներ, որոնց վրա է հիմնված տվյալ թիմի դիրքորոշումը:

17.4 Պահանջ դիմումները և պատասխանները ներկայացնելուց հետո չի թույլատրվում որևէ փոփոխությունների իրականացում:

18. Մրցույթի շրջանակներում սահմանվում է բանավոր լսումների հետևյալ հերթականությունը նախնական, կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերում:

18.1 Բանավոր լսումների ընթացքում սկզբում 20 րոպե ժամանակահատվածում իր դիրքորոշումը ներկայացնում է հաճախորդը, որից հետո նույն ժամանակահատվածում կազմակերպությունը ներկայացնում է իր առարկությունները:

18.2 Հաշտարարներն իրավունք ունեն հարցեր ուղղել բանախոսներին ինչպես դիրքորոշման ներկայացման ժամանակ, այնպես էլ դրանից հետո: Միևնույն ժամանակ հաշտարարները կարող են տրամադրել թիմերին հավելյալ ժամանակ հարցերին պատասխանելու համար:

18.3 Դիրքորոշումը ներկայացնելուց հետո յուրաքանչյուր թիմի տրամադրվում է 5 րոպե ժամանակ ամփոփիչ խոսքով հանդես գալու համար:

19. Մրցույթի արդյունքները որոշվում են հետևյալ կերպ.

19.1 Նախնական փուլ

19.1.1 Նախնական փուլում թիմի վերջնական գնահատականը (առավելագույնը 200 միավոր) բաղկացած է երկու բաղադրիչներից, որը ձևավորվում է հետևյալ կերպով.

- 1) Թիմերի պահանջ-դիմումը և պատասխանը (առավելագույնը 100 միավոր), որը կազմում է վերջնական գնահատականի 50%-ը:
- 2) Թիմերի ելույթը նախնական փուլի բանավոր լսումների ընթացքում (առավելագույնը 100 միավոր), որը կազմում է վերջնական գնահատականի 50%-ը:

19.1.2 Յուրաքանչյուր թիմի պահանջ-դիմում և պատասխան գնահատվում է կազմակերպչի կողմից ձևավորված ստուգիչ խմբի կողմից: Ստուգիչ խմբի յուրաքանչյուր անդամ գնահատում է պահանջ-դիմումը և պատասխանը 1-ից 50 բալային սանդղակով (որտեղ՝ 1-10 վատ, 11-20 միջակ, 21-30 բավարար, 31-40 լավ, 41-45 շատ լավ և 46-50 գերազանց): Յուրաքանչյուր պահանջ-դիմումի և պատասխանի գնահատականը որոշվում է ստուգիչ խմբի անդամների գնահատականների միջին թվաբանականով, իսկ յուրաքանչյուր թիմի գրավոր փուլի գնահատականը որոշվում է պահանջ-դիմումի և պատասխանի գնահատականների հանրագումարով:

19.1.2.1 «Լավագույն պահանջ-դիմում» և «Լավագույն պատասխան» անվանակարգերում հաղթող թիմերը որոշվում են նախնական փուլում թիմերի պահանջ-դիմումի և պատասխանի վերջնական գնահատականների արդյունքներով, մասնավորապես՝ «Լավագույն պահանջ-դիմում» և «Լավագույն պատասխան» անվանակարգերում հաղթող են ճանաչվում այն թիմերը, որոնք ստացել են պահանջ-դիմումի և պատասխանի համար ստուգիչ խմբի անդամների գնահատականների միջին թվաբանականով որոշված առավելագույն միավորները: Միավորների հավասարության պայմաններում առաջնություն է տրվում նախնական փուլում առավելագույն միավորներ (որը ձևավորվում է գրավոր փուլի և բանավոր լսումների արդյունքում) ստացած թիմին:

19.1.2.2. Ստուգիչ խմբի անդամներն ազատ են պահանջ դիմումների և պատասխանների գնահատման մեջ և գործում են միմյանցից անկախ՝ իրենց ներքին համոզմունքի հիման վրա:

Հայցադիմումների և պատասխանների գնահատման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

- փաստարկումների համոզիչ, տրամաբանական հաջորդականությամբ և ամբողջական լինելը,
- իրավական նորմեր և տեսական աղբյուրներ կիրառելու կարողությունը,
- գործի փաստերի և նյութերի օգտագործումը,
- վեճի մյուս կողմի փաստարկումներին հակափաստարկներ ներկայացնելու կարողությունը, վեճի մյուս կողմի դիրքորոշման ուսումնասիրության ամբողջականությունը,
- կատարված վերլուծության և դրանից բխող եզրակացության պատշաճ համադրությունը,
- ընդհանուր կառուցվածքը, ձևը:

19.1.3. Բանավոր լսումների համար գնահատումը

Բանավոր լսումներից յուրաքանչյուրի ժամանակ թիմի ելույթը գնահատում են լսումներին մասնակցած երեք հաշտարարները:

Յուրաքանչյուր հաշտարար յուրաքանչյուր թիմի նշանակում է 1-50 բալ (1-10 միավոր – վատ, 11-20 միավոր – միջակ, 21-30 միավոր – բավարար, 31-40 միավոր – լավ, 41-45 միավոր – շատ լավ, 46-50 միավոր – գերազանց)

Թիմի գնահատականը յուրաքանչյուր լսումի համար որոշվում է երեք մասնագետների գնահատականի միջին թվաբանականի հիման վրա: Բանավոր լսումների ժամանակ ելույթի համար թիմի գնահատականը որոշվում է երկու լսումների համար ստացված գնահատականների հանրագումարով:

Մասնագետներն ազատ են բանավոր լսումները գնահատելիս և գործում են իրարից անկախ՝ իրենց ներքին համոզմունքի հիման վրա:

Բանավոր լսումների գնահատման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

- փաստարկների համոզիչ լինելը, հոկտորությունը,

- ներկայցվող կողմի դիրքորոշումը հիմնավորող փաստերը, գործի նյութերը, իրավական նորմերը, տեսական աղբյուրները և պրակտիկան կիրառելու ունակությունը,
- մասնագետների հարցերին սպառնիչ պատասխանելու ունակությունը,
- կազմակերպվածությունը և պատրաստվածությունը,
- լսումների ժամանակ ընդհանուր վարքը:

19.1.4. Նախնական փուլի արդյունքների հիման վրա թիմերի տեղերի որոշումը

Նախնական փուլի արդյունքների հիման վրա թիմերը նվազման կարգով դասակարգվում են իրենց տեղերով՝ առաջինից վերջին:

Թիմի ընդհանուր գնահատականը որոշվում է բանավոր և գրավոր փուլերի գնահատականների հանրագումարով՝ հաշտարարների կողմից պահանջ-դիմումների և պատասխանների համար նշանակված բոլոր գնահատականների և բանավոր լսումների համար գնահատականների հանրագումարով:

Երկու կամ ավելի թիմերի մոտ հավասար գնահատականների պայմաններում ավելի բարձր տեղ է զբաղեցնում այն թիմը, որը բանավոր լսումների ժամանակ ելույթի համար ունի լավագույն արդյունքը:

Վերոնշյալ ցուցանիշի հավասարության պայմաններում թիմի տեղը որոշվում է վիճակահանությամբ:

19.2. Եզրափակիչ և կիսաեզրափակիչ փուլ

19.2.1. Եզրափակիչ փուլի մասնակիցների որոշումը

Ամենաբարձր միավորները հավաքած 4 թիմերն անցնում են կիսաեզրափակիչ փուլ Կիսաեզրափակիչ փուլում հակառակորդ թիմերը որոշվում են վիճակահանությամբ:

19.2.2. Կիսաեզրափակիչ փուլում յուրաքանչյուր թիմ մասնակցում է մեկ բանավոր լսումի, որում հաղթող թիմն անցնում է եզրափակիչ փուլ: Կիսաեզրափակիչ փուլում հաղթող թիմերը որոշվում են միայն սովյալ փուլի գնահատականներով՝ առանց գրավոր փուլի գնահատականները հաշվի առնելու:

19.2.3. Լսումների արդյունքները եզրափակիչ փուլում

Եզրափակիչ փուլում հանդես են գալիս թվով 3 հաշտարարներ: Եզրափակիչ փուլում հաղթող թիմերը որոշվում են միայն տվյալ փուլի գնահատականներով՝ առանց գրավոր փուլի գնահատականները հաշվի առնելով:

Եզրափակիչ լսումների արդյունքների հիման վրա տվյալ լսումներին մասնակցած հաշտարարները քվեարկության միջոցով ընտրում են հաղթող և պարտվող թիմերին: Հաղթում է այն թիմը, որի օգտին քվեարկում է տվյալ լսումներին ներկա հաշտարարների պարզ մեծամասնությունը: Լսումների արդյունքները ամփոփում և որոշումը հայտնում է համապատասխան կազմով մասնագետների խումբը նախագահողը:

Եզրափակիչ փուլում թիմերի կողմից պատրաստած պահանջ-դիմումները/պատասխանները առանձին չեն գնահատվում: Սակայն եզրափակիչ փուլին ներկա մասնագետները ծանոթանում են պահանջ-դիմումներին/պատասխաններին, և կարող են դրանք հաշվի առնել տվյալ լսումներում հաղթողին ընտրելիս:

19.3. Դատախաղ-մրցույթի հաղթողը

Դատախաղ-մրցույթի հաղթող է համարվում եզրափակիչ փուլում հաղթող թիմը:

19.4. Կազմակերպիչ կոմիտեն լրացուցիչ որոշում է հետևյալ անվանակարգերում հաղթող թիմերին (մասնակիցներին).

19.4.1. «Լավագույն բանախոս»

Այս անվանակարգում հաղթող է ճանաչվում ցանկացած թիմից մասնակից, ով նախնական փուլի լսումների արդյունքում հավաքել է առավելագույն միավորները:

19.4.2. «Լավագույն պահանջ-դիմում»

Անվանակարգում հաղթողին ընտրում են ստուգիչ խմբի անդամները՝ համաձայն սույն կանոնակարգի 19.1.2.1, 19.1.2.2 կետերի:

19.4.3. «Լավագույն պատասխան»

Անվանակարգում հաղթողին ընտրում են ստուգիչ խմբի անդամները՝ համաձայն սույն կանոնակարգի 19.1.2.1, 19.1.2.2 կետերի:

20. Ստուգիչ խումբը

Պահանջ-դիմումների և պատասխանների գնահատման համար ներգրավված մասնագետները հանդիսանում են ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի մասնագետներ:

21. Հաշտարարները

Լուումների գնահատման համար ներգրավված մասնագետները հանդիսանում են Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի մասնագետներ, իրավաբաններ, փաստաբաններ, բուհերի դասախոսներ, այլ անձինք:

Հաշտարարներն ընտրվում են կազմակերպչի կողմից: Յուրաքանչյուր լուումների ժամանակ մասնագետների կազմը որոշում է կազմակերպիչ կոմիտեն:

21. Մրցանակներ

Մրցույթի շրջանակներում մրցանակների և պատվոգրերի են արժանանում

- Հաղթող թիմը
- «Լավագույն պահանջ-դիմում» անվանակարգում հաղթող թիմը
- «Լավագույն պատասխան» անվանակարգում հաղթող թիմը
- «Լավագույն բանախոս» անվանակարգում հաղթող մասնակիցը

Մրցույթի շրջանակներում իրենց լավագույն դրսևորած ուսանողները իրավունք կստանան մասնակցելու Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից կազմակերպվող «Հատուկ ամառային պրակտիկայի ծրագրին»